

## ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/3

#### 4 հոկտեմբերի 2016թ.

Քննարկվեց քաղաքացի Մարտին Գաբրիելյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 28.07.2016թ. թիվ 1493/02 որոշման դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննարկելով քաղաքացի Մարտին Գաբրիելյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ ՀՀ կառավարության 30.12.2010թ. թիվ 1775-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն, քաղաքացի Մարտին Գաբրիելյանի կողմից 24.02.2014թ. օտարվել է ք.Երևան, Նոր Նորքի Միկոյան փողոց 18/3 շինություն հասցեում գտնվող հասարակական նշանակության անշարժ գույքը, որի պայմանագրի գումարը կազմել է 35.000.000 դրամ, իսկ կադաստրային արժեքը՝ 72.945.159 դրամ:

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների քաղաքացի Մարտին Գաբրիելյանի կողմից իրականացվել է ԱԱՀ-ով հարկվող գործարք, սակայն 2014թ. 1-ին եռամսյակի համար հարկային տեսչություն չի ներկայացվել ԱԱՀ-ի հաշվարկ:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված տեղեկությունները կատարվել է քաղաքացի Մարտին Գաբրիելյանի հարկային պարտավորությունների հաշվարկ, որի համաձայն 07.07.2016թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 7.436.234 դրամ, որից ապառք 2.919.032 դրամ, տույժ 1.598.170 դրամ, տուգանք 2.919.032 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 28.07.2016թ-ին ընդունվել է թիվ 1493/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Մարտին Գաբրիելյանից 7.436.234 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Հարկ է նշել, որ գանգատին կից ներկայացվել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված «Գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ տեղեկանք»-ը, որի համաձայն ք.Երևան, Նոր Նորքի Միկոյան փողոց 18/3 շինություն հասցեում գտնվող անշարժ գույքի կադաստրային արժեքը, ըստ կադաստրային գործի տվյալների, կազմում է 31.003.339 դրամ:

Քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ք.Երևան, Նոր Նորքի Միկոյան փողոց 18/3 շինություն հասցեում գտնվող անշարժ գույքի

կադաստրային արժեքի վերաբերյալ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրվել է, ըստ էության, իրարամերժ տեղեկատվություն:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործի վերաբերյալ իրավաչափ որոշում կայացնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ (կատարել հարցում) վերոգրյալ անշարժ գույքի կադաստրային արժեքի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն ստանալու ուղղությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### **ո թ ո շ ու մ է՝**

Քաղաքացի Մարտին Գաբրիելյանի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**